ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ապաստանի տրամադրման վարչության
ապաստանի հայցի քննման բաժնի պետ
Սեդա Հարությունյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 26-ը ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետ Նաիրա Պավլիկի Եղիազարյանի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. իրականացրել եմ ապաստան ստանալու դիմումների վարույթ և կայացրել եմ դրանց վերաբերյալ որոշումներ.

2. իրականացրել եմ ապաստան հայցողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքներ.

3. Պատասխանել եմ քաղաքացիների և պետական կառույցներից ստացված հարցումներին՝ կապված ՀՀ-ում փախստականի կարգավիճակի և ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ:

4. Բաժնի էլեկտրոնային համակարգով պատրաստել և հաստատման եմ ուղարկել ապաստան հայցող դիմումատուների ծանուցումները, ինչպես նաև նրանց վերաբերյալ հարցումներ եմ ուղարկել համապատասխան պետական կառավարման մարմիններ:

5. Մասնակցել եմ «Հայաստանում միգրացիայի և ապաստանի արդյունավետ կառավարման քաղաքականության շրջանակի և կարողությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից 2025 թվականի հուլիսի 12-13-ը Աղվերանում կազմակերպված «Ապաստանի համակարգերի հզորացում ինքնագնահատման միջոցով» թեմայով քննարկմանը:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ԱՀՔ բաժնի փորձագետ՝ Ն.Պ.Եղիազարյան

« 26 » սեպտեմբեր 2025թ.

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները
գնահատում եմ՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ԱՏՎ ապաստանի հայցի
քննման բաժնի պետ՝ Ս. Հարությունյան

«26» սեպտեմբեր 2025թ.